«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Երաժշտադիդակտիկ խաղերը՝որպես երեխայի գեղագիտական դաստիարակության միջոց:

Երաժիշտ-դաստիարակ՝ Մանուշ Մանուկյան

Մանկապարտեզ՝ « Վերնաշենի » ՀՈԱԿ

2023թ.

Բեվանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. 5

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ն ԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 5

Երեխայի անձի ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում..... 5

1.2. Նախադպրոցական դիդակտիկայում կիրառվող ուսուցման մեթոդները 8

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐԸ 10

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 10

2.1. Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները 10

2.2. Երեխայի գեղարվեստական, մասնավորապես՝ երաժշտական գործունեությունը և դրա կազմակերպման առանձնահատկությունները 12

2.3. Երաժշտությունը նախակրթարանում 13

ԳԼՈՒԽ 3. 16

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ (Գործնական աշխատանք) 16

3.1. Երաժշտական գործունեության ձևերը նախակրթարանում 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատություններում գեղագիտական դաստիարակությունն ուղղված է գեղեցիկի և շրջապատող իրականության գեղագիտական ընկալմանն ու ստեղծագործական ունակությունների ձևավորմանը: Այս տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական գործունեության կազմակերպման հարցում գլխավոր դերը պատկանում է շրջապատող աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունքի ձևավորմանը:

Երեխայի գեղարվեստական գործունեության մեջ էական տեղ ունի երաժշտական դաստիարակությունը: Այս տարիքում երաժշտական մշակույթի ձևավորման կարևորությունը պայմանավորված է երաժշտության դրական ազդեցությամբ: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում երաժշտական մշակույթի ձևավորման համար կարևոր տեղ են գրավում երգերը, խաղերգերը, երաժշտական խաղերը, պարերգերը:

Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով շատանքի նպատակն է՝ուսումնասիրել և ցույց տալ նախադպրոցականի զարգացման և գեղագիտական դաստիարակության գործում երաժշտության, մասնավորապես՝ երաժշտական խաղերի, խաղերգերի դերը երեխայի ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորման գործում:

Նպատակից բխող **խնդիրներն են.**

- Մասնագիտական գրականությունից ուսումնասիրել երեխայի անձի ձևավորման և մանկավարժական գործընթացի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:
- Ուսումնասիրել նախադպրոցահասակ երեխաների գեղարվեստական, մասնավորապես՝ երաժշտական գործունեությունը և դրա կազմակերպման առանձնահատկությունները:
- Հավաքել այդ տարիքի երեխաներին հարմար երաժշտական խաղերի, խաղերգերի փաթեթ և փորձարկել դրանք մանկապարտեզում:
- Արդյունքներն ամփոփել և վերլուծել:

Աշխատանքի կառուցվածքը
Աշխատանքն ունի.

Ներածություն

- **Երեք գլուխ.**

1. Մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկություն-ները նախադպրոցական տարիքում
2. Նախադպրոցական երեխաների երաժշտական ունակությունների զարգացման դերը գեղագիտական դաստիարակության համակարգում
3. Երաժշտական գործունեության փաթեթի ստեղծում և փորձարկում (գործնական աշխատանք)

- **Եզրակացություն**
- **Գրականության ցանկ**

Աշխատանքի կատարման ընթացքում օգտագործված մեթոդները.

- Խաղային մեթոդ
- Գործնական ուսուցման մեթոդ
- Ակտիվ ուսուցման մեթոդ
- Ընդհանուր հարց ու պատասխանի մեթոդ
- Հարցադրումների մեթոդ
- Հետազոտական մեթոդ

ԳԼՈՒԽ 1.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Երեխայի անձի ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Երեխայի զարգացման և նրա անձի ձևավորման գործընթացները փոխկապված են: Անձնավորությունը մարդու սոցիալական նկարագիրն է և բնութագրում է մարդկային այն որակները, որոնք ձեռք են բերվում հասարակության մեջ՝ մարդկանց հետ հարաբերվելու ընթացքում: Անձնավորության հիմնական չափանիշներն են գիտակցությունը և ինքնագիտակցությունը, որոնք մարդուն դարձնում են ինքնուրույն և վերափոխող գործունեության ընդունակ: Մարդու զարգացումը բարդ, երկարատև և հակասություններով լի գործընթաց է, որի ընթացքում քանակական փոփոխությունները վերածվում են որակականի և բոլոր փոփոխությունները փոխպայմանավորված են:

Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն կարող ենք միավորել երեք խմբում. կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:

Մանկավարժական գործոնների շարքին է դասվում **երեխայի ինքնուրույն գործունեությունը,** որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացմանը: Երեխայի ինքնուրույնությունը նրա զարգացման և անձ-նավորության ձևավորման կարևորագույն գործոն է:
Երեխայի զարգացման մեջ պատասխանատու դեր ունի մանկավարժական գործոնը:

Սոցիալական գործոնները սոցիալական միջավայրից բացի ենթադրում են նաև երեխայի ակտիվության սոցիալական ձևերը: Մարդկային գոյատևման հիմնական ձևը շարժումն է: Ակտիվությունը կենդանի օրգանիզմի հատկությունն է, զարգացման կարևորագույն նախապայմանը: Պրենատալ շրջանից սկսած երեխան արձագանքում է աշխարհին ակտիվ գործողություններով: Երեխային բնորոշ են ակտիվության տարբեր դրսևորումներ, որոնք նպաստում են նրա ընդհանուր զարգացմանը և օգնում կողմնորոշվելու միջավայրում:
Ֆիզիկական ակտիվությունը ապահովում է երեխայի օրգանիզմի կենսագործունեու-թյունը: **Իմացական ակտիվությունը** նպաստում է աշխարհաճանաչմանը,

իսկ **ինտելեկտուալ ակտիվությունը**՝ ինքնահաստատմանը նոր միջավայրում: **Հուզական ակտիվությունը** դիմացինի հետ հաղորդակցվելու հրաշալի միջոց է, համագործակցության առաջին դրսևորումը: Վերջապես, երեխան աստիճանաբար ձեռք է բերում **սոցիալական ակտիվություն**, որը դրսևորվում է գործունեության տարբեր ձևերով: Գործունեությունը սոցիալական ակտիվության դրսևորումն է, քանի որ այն ուղղված է պահանջմունքների բավարարմանը: Նախադպրոցական տարիքում երեխայի համար առաջատարը **խաղային գործունեությունն է**:
Վաղ տարիքի երեխաների զարգացումն ընթանում է որոշակի օրինաչափություններով, որոնք դրսևորվում են տարիքը բնութագրող առանձնահատկություններով: Վաղ տարիքի երեխաներին բնորոշ են զարգացման հետևյալ առանձնահատկությունները:

Կյանքի առաջին երկու տարիները **Ֆիզիկական և հոգեկան զարգացման** շրջանն է. երեխան սովորում է տեղաշարժվել ուղղաձիգ քայլքով, հաղորդակցվել խոսքի օգնությամբ, հարաբերվել առարկայական աշխարհի հետ, կառավարել սեփական մարմինը և արձագանքել աշխարհին հույզերով: Դառնում է ինքնուրույն, համեմատաբար անկախանալով մեծահասակներից:
Այս տարիքում ֆիզիկական զարգացման ձեռքբերումները դրդում են հոգեկան ակտիվության, իսկ հոգեկանի զարգացման լիարժեք ընթացքը նպաստում է երեխայի օրգանիզմի ամրապնդմանը, ֆիզիկական աճին: Ֆիզիկական, ինչպես նաև հոգեկանի զարգացման հիմքում ընկած է նյարդային համակարգի հասունացումը, բարձրագույն նյարդային գործունեությունը:

Խոսքի և հաղորդակցության զարգացում
Վաղ տարիքը երեխայի խոսքի բուռն զարգացման շրջան է: Եթե մեկ տարեկան երեխան օգտագործում է 10-15 բառ, ապա երեք տարեկան երեխայի ակտիվ բառապաշարը բաղկացած 1.000-ից ավելի բառերից: Ակտիվ խոսքի կարողությունները պայմանավորված են աստիճանաբար հարստացող պասիվ բառապաշարով, որը զգալի հզոր է ակտիվից: Խոսքի ձևավորումը վաղ տարիքում ընթանում է հետևյալ հաջորդականությամբ. սկզբից ընկալվում և յուրացվում է բառերի իմաստային նշանակությունը, և այդ բառերն իրենց տեղն են գտնում երեխայի պասիվ բառապաշարում, որից հետո համապատասխան հարմար իրավիճակում դրանք ակտիվանում են, այն է՝ սկսում են օգտագործվել ակտիվ խոսքում և փոխանցվում են, կարծես, երեխայի ակտիվ բա- ռապաշար:

Վաղ տարիքի ամենակևոր ձեռքբերումը **խոսքային հաղորդակցումն** է, որն արդյունք է խոսքի տիրապետման և մտածողության զարգացման: Հայտնի է, որ խոսքի և մտածողության զարգացման գործընթացները փոխկապված են, որ խոսքը՝ մտածողության գործիքն է: Երեխան սկսում է «խոսել» նախախոսքային ձևերով

(գեղգեղանք, թոթովանք) կյանքի առաջին տարվա ընթացքում, հետևաբար պետք է ենթադրել, որ նա նաև մտածում է: Ժ.Պիաժեի, Լ.Ա.Վենգերի, Ս.Լ.Նովոսյոլովայի, Վ.Ս.Մուխինայի հետազոտություններն ապացուցում են, որ մտածողության առաջին դրսևորումներն ի հայտ են գալիս կյանքի երկրորդ տարվա շեմին՝ առարկաների միջև որոշակի կապ փնտրելու նպատակով գործնական քայլեր կատարելու ձևով: Նշված գործնական քայլերը կամ պրակտիկ գործողությունները ակնառու գործնական մտածողության առաջին դրսևորումներն են:
Խոսքի միջոցով արտահայտվում է նաև երեխայի զգայական փորձն ու հիշողությունը: Հիշողության և ուշադրության զարգացման շնորհիվ երեխան մտածում է և փորձում խոսքի միջոցով բացատրել սեփական գործողությունները: Վաղ տարիքում գործողություններն առարկայական են՝ ուղղված առարկայական աշխարհի ճանաչմանը:

Առարկայախաղային գործունեություն
Վաղ տարիքում ձևավորվում է **առարկայական գործունեությունը**, որը նպաստում է երեխայի հոգեկան զարգացմանը և համարվում է առաջատար վաղ մանկության շրջանում: Առարկայական գործունեության զարգացումն ընթանում է ընդօրինակման եղանակով և պայմանավորված է մեծահասակների հետ խոսքային հաղորդակցմամբ: **Ընդօրինակումը** վաղ տարիքի երեխաների զարգացման, ինքնուրույնության դրդող հիմնական մեխանիզմն է: Առարկայական գործունեությունը հիմք է հանդիսանում նաև նախադպրոցական մանկության շրջանում առաջատար՝ խաղային գործունեության ձևավորման համար:
Խաղային գործունեության տարրերը սկսում են դրսևորվել երեխայի առարկայա-խաղային ակտիվության պայմաններում, երբ ինքնուրույն առարկայական գործողությունների արդյունքում առարկաների նկատմամբ առաջանում է խաղային վերաբերմունք: Երեխայի **առարկայախաղային** ակտիվությունը դրսևորվում է հետևյալ ձևով.

- երեխան փորձում է առարկաներն օգտագործել տարբեր նպատակներով;
- համադրում և հաճախ միավորում է առարկաների հիմնական գործառույթները;
- փորձում է գտնել առարկաների կիրառման անսովոր նոր գործառույթներ;
- առարկաները սկսում է օգտագործել որոշակի դերային նշանակությամբ, շնչավորում է և շփվում դրանց հետ խոսքի միջոցով,
- խոսքային հաղորդակցման և նշված վերաբերմունքի արդյունքում կառուցվում է սյուժե;
- առարկաների բազմաֆունկցիոնալ օգտագործման հիման վրա ձևավորվում է առարկաները մեկը մյուսով փոխարինելու կարողությունը, փոխարինման գործառույթը դառնում է գերակշռող խաղային գործունեության ընթացքում:

Այսպիսով, առարկայական գործունեության հիման վրա գոյանում է **առարկայախաղային գործունեությունը**, որն աստիճանաբար վերափոխվում է արտացոլող բնույթի **սյուժետադերային խաղի:**

Խաղային գործունեության նախադրյալների հետ մեկտեղ առարկայական գործունեությունը պայմաններ է ստեղծում և նպաստում է
արդյունավետ **գեղարվեստական գործունեության** (նկարչության, ծեփի, կառուցողական գործունեության) տարրերի դրսևորմանը:
Ձևավորված առարկայական գործունեությունը խթանում է երեխայի կողմից սեփական ցանկությունները ինքնուրույն գործողություններով բավարարելու գործընթացը, ինչն իր հերթին հիմք է հանդիսանում երեք տարեկանի շեմին կարևորագույն հոգեկան նորագոյացության՝ «Ես ինքս» գիտակցության զարգացման համար:

Երեխայի մտավոր զարգացումը
Նախադպրոցական տարիքի **երեխաների մտավոր դաստիարակության** կարևորագույն խնդիրներն են. ընկալման և մտածողության զարգացումը:
Մտավոր դաստիարակության մյուս խնդիրները լրացնում և իմաստավորում են նշված հիմնական խնդիրները: Դրանք են.

- հոգեկան իմացական գործընթացների, հատկապես խոսքի, զարգացումը (խոսքը մտածողության գործիքն է);
- հետաքրքրասիրության և ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը (իմացական գործունեության հիմնական դրդապատճառը ճանաչողական հետաքրքրությունն է);
- տարրական գիտելիքների համակարգի ձևավորումը (համակարգված գիտելիքներն են երեխայի մտավոր զարգացման հենքը, պայմանը):

Մտավոր դաստիարակության ընթացքում չափազանց կարևոր է պահպանել երեխայի բնածին հետաքրքրասիրությունը և, այն հիմք ընդունելով, ձևավորել մտավոր գործունեության իմացական դրդապատճառներ:

1.2. Նախադպրոցական դիդակտիկայում կիրառվող ուսուցման մեթոդները
Նախադպրոցական դիդակտիկայում, նկատի ունենալով այդ տարիքի երեխաների զարգացման տարիքային առանձնահատկությունները, կիրառվում են ժամանակակից խաղային և ակտիվ ուսուցման մեթոդներ:

Խաղային մեթոդներ
Նախադպրոցականի ուսուցման պրակտիկայում առավել արդյունավետ
են **խաղային մեթոդները:** Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով: Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Սակայն ուսուցմանը հատուկ ուղղված են **դիդակտիկ խաղերը,** որոնք կատարում են երկու կարևորագույն գործառույթ.

- Խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը,

- Նպաստում են գիտելիքների ամրապնդմանը, գործածմանը և կատարելագործմանը:

Օրինակ՝ հետաքրքիր խաղային մեթոդ
է **երևակայական իրադրությունների խաղարկումը,** որի ընթացքում երեխայի գիտելիքները և կարողությունները ձեռք են բերվում պարտադրված դերային գործողությունների միջոցով:
Ուսուցման խաղային մեթոդները խաղային հնարների բազմազանության հաշվին ունեն տարբերակված կիրառության լայն հնարավորություններ և հաջողությամբ օգտագործվում են նախադպրոցականին բոլոր ուղղություններով զարգացնելու ընթացքում: Զարգացման հրաշալի մեթոդ է խաղի յուրաքանչյուր տեսակ:

Ուսուցման գործնական մեթոդներ
Նախադպրոցականի ուսուցման գործընթացում այսօր առաջատար են համարվում ուսուցման գործնական մեթոդները, որոնց խմբին դասվում են տարատեսակ

- վարժությունները,
- փորձերը, փորձարարությունը (հետազոտումը),
- մոդելավորումը:

Վարժությունները լինում են տարբեր բնույթի՝ ընդօրինակող, կառուցողական և ստեղծագործական: Ուսուցանող, աստիճանաբար բարդացող վարժություններն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նախադպրոցականի մտավոր դաստիարակության համակարգում: Վարժությունները հետաքրքրում են երեխաներին նրանով, որ օգտագործվում են ուսուցման ընթացքում որպես խաղային կամ աշխատանքային գործունեության մաս և նպաստում են մտավոր զարգացմանը միջնորդված եղանակով:
Փորձերի և փորձարարության դերը անգնահատելի է ժամանակակից դիդակտիկայում: Փորձարարության ցանկությունը բնորոշ է նախադպրոցական տարիքի երեխաներին, նրանք միշտ պատրաստ են ուսումնասիրելու երևույթների ներքին հատկություններն ու կապերը զանազան փորձերի, փորձարկումների միջոցով: Փորձարարությունը երեխայի որոնողական գործունեության յուրահատուկ ձև է, ներքին ակտիվության վառ դրսևորում: Երեխաների որոնողական, փորձարարական գործունեությունը պրոբլեմային ուսուցման հիմնական եղանակն է:
Ակտիվ ուսուցման մեթոդներ
ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում իրենց հաստատուն տեղն են աստիճանաբար գրավում ակտիվ ուսուցման մեթոդները, որոնք հայտնի են որպես **փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ**:
Ակտիվ ուսուցման մեթոդները համահունչ են պրոբլեմային և միջնորդված ուսուցման սկզբունքներին և ուղղված են երեխայի որոնողական և իմացական գործունեության ձևավորմանը, ազատ մտածելու, կարծիք հայտնելու կարողությունների զարգացմանը, ինքնուրույն կողմնորոշմանը: Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներ են՝ ուղղված համատեղ մտորումների և որոնումների քննարկմանը,

ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են անձնակենտրոն ուսուցման սկզբունքներին, համահունչ են նախադպրոցական կրթության ռազմավարությանը:

Ուսուցման գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է երեք հիմնական ձևերով:

Ուսուցման կազմակերպման դեռևս ամենատարածված ձևը պարապմունքն է: Պարապմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մանկավարժից: Այսօր առավել արժեքավոր են համարվում համալիր բնույթի պա-րապմունքները, որոնց ընթացքում դիդակտիկ խնդիրները լուծվում են երեխաներին ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Մշակվում են նաև ինտեգրված պարապմունքներ, որոնց ընթացքում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ տարբեր ոլորտներից:

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐԸ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.1. Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները

Գեղագիտական դաստիարակությունը կարևոր տեղ ունի նախադպրոցականների դաստիարակության համակարգում, այն նպաստում է երեխայի հուզական ոլորտի

զարգացմանն ու զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է իմացական գործունեությունը, բացահայտում ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը: Ճիշտ կազմակերպված գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է երեխաների

- **գեղագիտական գիտակցությունը** (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկի պահանջմունք և գեղագիտական ճաշակ),
- **գեղագիտական, գեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները** (նկաչություն, ապլիկացիա, ծեփակերտում և այլն):

Այս կարողությունները կարևոր են համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման համար: Նախադպրոցական, հատկապես ավագ նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական
դաստիարակության **հիմնական նպատակը** երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է:
Գեղագիտական դաստիարակության խնդիրները կարող ենք բաժանել երկու խմբի:
Առաջին խումբը նպաստում է երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը, ինչը ներառում է

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ.
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակություն.
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողություն.
- գեղեցիկը ճանաչելու պահանջմունք.
- գեղագիտական ճաշակ:

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտական-գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը:
Այս տարիքում այդպիսի խնդիրներ կարող են լինել.

- նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- ապլիկացիայի ուսուցումը.
- կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- **երաժշտական ընդունակությունների զարգացումը, երաժշտա—ռիթմիկ կարողությունների ձևավորումը,**
- **պարարվեստի տարրերի ձևավորումը**,
- դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորումը,
- արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուր գաղափարների փոխանցումը,

- գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորումը:

2.2. Երեխայի գեղարվեստական, մասնավորապես՝ երաժշտական գործունեությունը և դրա կազմակերպման առանձնահատկությունները

Երաժշտությունը մի յուրահատուկ լեզու է, որը շրջապատի համար մատչելի է դարձնում մարդու ներքին ապրումները, դարձնելով դրանք «լսելի»: Երաժշտությունը որոշ ժամանակ տևող հնչյունների հիացմունք առաջացնող ամբողջություն է՝ ներդաշնակության մեջ: Դեռևս հին տրակտատներում նշվում է, որ երաժշտությունը տիեզերական ներդաշնակություն է: Մարդու կյանքում այն միշտ մեծ դեր է ունեցել:

Կասկած չկա, որ երաժշտությունը մեծ ազդեցությունն ունի մարդու հոգեկանի վրա՝ առաջացնելով բազմազան հույզեր: Ձայնային տատանումները, ընկալվելով լսողական օրգանի միջոցով, փոխանցում են ինֆորմացիան դեպի ուղեղի համապատասխան մասեր: Տատանումներն անմիջականորեն ազդում են մարմնի և մեր կատարած գործունեության վրա: Երաժշտությունը հանգստացնող, երբեմն նաև բուժող միջոց է: Հայտնի է, որ օրգանիզմի վրա ուժեղ ազդեցություն ունի դասական և ժողովրդական երաժշտությունը:

Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաների կյանքում խոսքը, շարժումը, խաղը և երգը միասնական են: Համարվում է, որ երեխայի բնական խոսքն ու շարժումները պետք է դառնան երաժշտական փորձառության խթաններ, և որ երեխաները պետք է երաժշտության ստեղծման գործում մասնակիցներ դառնան:

Խմբերում ընդունված է ունենալ **Երաժշտական կենտրոն,** որի աշխատանքը նպաստում է երեխաների համակողմանի զարգացմանը: Նրա առավել ակնհայտ նշանակությունը կապված է հուզական զարգացման հետ: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո, փաղաքշանքի, ուրախության, խիզախության, տխրության երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները: **Երաժշտությունը զորեղ միջոց է սոցիալական զարգացումը խթանելու համար**: Երեխաների խումբը կարող է համատեղ երգել կամ նվագակցել՝ մեծ հաճույք ստանալով այդ խմբային գործունեությունից: Հաճախ այն երեխաները, ովքեր դժկամությամբ են մասնակցում կամ ինքնարտահայտվում խմբային պարապմունքների ժամանակ, ավելի մեծ պատրաստակամությամբ են միանում երգին կամ պարին: Մանկական երգերից շատերը նախատեսում են զուգորդող շարժումների կատարում: Այս երգերը, որոնց ընթացքում երեխաները միաժամանակ կատարում են միևնույն շարժումները, հատկապես արդյունավետ են այլ

հանգամանքներում պասիվություն դրսևորող երեխաներին աշխուժացնելու և ներգրավելու իմաստով:

Երաժշտությունը խթանում է նաև լեզվական ունակությունների զարգացումը: Մարդկային խոսքին հատուկ է թե՛ ռիթմիկ և թե՛ մեղեդային կառուցվածքը: Սովորաբար երեխաները խաղում են բառերի հետ ռիթմի և մեղեդու տարրերի կիրառմամբ: Այս բնական խաղը մանկավարժի կողմից կարող է օգտագործվել երեխաների ուշադրությունը լեզվի հնչողության վրա դարձնելու համար: Օրինակ՝ նա կարող է օգնել երեխաներին սովորել խմբի մյուս երեխաների անունները՝ ցուցադրելով յուրաքանչյուր երեխայի անվան ռիթմը ծափերի կամ դափերին հարվածելու միջոցով:

Երաժշտությունը կարող է օգնել երեխաներին ընդլայնելու իրենց լեզվական կարողությունները: Մեղեդին հղկում է հիշողությունը, հետևաբար երեխան կարող է հիշել երգի այն բառերը, որոնք իր բնական խոսքից մի փոքր բարդ են, այնուհետև օգտագործել դրանք նաև իր խոսքում: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Մեծ է այնպիսի երգերի թիվը, որոնք պարունակում են թվարկումներ ու երևույթների անվանումներ, որոնց միջոցով երեխաների բառապաշարը կհամալրվի նոր բառերով: Երեխաները կարող են ծանոթ մեղեդիների օգտագործմամբ սեփական երգեր հորինել՝ պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով անհատական զգացողությունները:

Երաժշտության միջոցով զարգանում են երեխաների շարժողական հմտությունները: Երաժշտական մատնախաղերը երեխային հնարավորություն են տալիս շարժելու մատներից յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ ի պատասխան որոշակի երգի, հետևաբար հղկում են աչքերի ու ձեռքերի կոորդինացիան: Պարզունակ ինքնաշեն գործիքները զարգացնում են նուրբ շարժողական հմտությունները, ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ նվագելու ընթացքում: Ինքնաբուխ պարերն ու երաժշտությանը համահունչ շարժումները ևս խթանում են շարժողական կոորդինացիան: Թեև երեխաների հորինած պարային շարժումները մեծապես նպաստում են նրանց զարգացմանը, տեղին է նաև ժողովրդական պարերի մի քանի հասարակ շարժումներ սովորեցնել նրանց խմբային ներկայացումների համար:

2.3. Երաժշտությունը նախակրթարանում

Նախակրթարանում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին,

ինչպես նաև ծանոթացնել ազգային (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն): Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. *Երաժշտության ունկնդրում* – դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ,
2. *Երգեցողություն* – զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության, տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը): Ձայնածավալը՝ դո1 (ռե1) – սի1, դո2:
3. *Երաժշտառիթմիկ շարժում*, պարեր, խաղեր – ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը[1]:

Նախակրթարանում երաժշտական դաստաիրակության խնդիրները քննելիս անպայման պետք է հիմնվենք մինչև այսօր արվածի, այսինքն՝ փորձի վրա: «Մինչև այսօր» ասելով՝ նկատի ունենք մեզ մոտ կիրառված դաստիարակության՝ դարերի փորձը: Ելակետ պետք է ունենալ ազգային դպրոցը, որովհետև չենք կարող արհամարհել այն, ինչը հարազատ է ժողովրդին, և չենք կարող հիմնական տեղը տալ կասկածելի «նորմուծություններին»: Նորամուծություն կատարվում է, երբ յուրացված է ավանդականը: Սակայն ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը:

Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով: Հայոց մեջ երաժշտական կրթության ամենամեծ գիտակն ու ուսուցիչը Կոմիտասն է, որից սովորելը իրենց առաջնային պարտքն են համարում մեր երաժշտության երախտավորները, սակայն բոլորն էլ այդ օվկիանոսի մի չնչին մասն են միայն յուրացրել կամ ճանաչել: Ժողովրդական դպրոցի շնորհիվ է, որ հունգարացիները աշխարհը զարմացրին երաժշտական կրթության իրենց արդյունքներով»:

Նախակրթարանում **երաժշտական նյութը** պետք է լինի անենալավն ու փորձվածը, այն, ինչը ստեղծվել է կյանքի մեջ՝ կյանքի զույներով, խաղերով: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև

խաղիկը, ասիկը: Միևնույն ժամանակ պետք է իմանանք՝ ինչպես մատուցել, որ մանկան հոգու մեջ թողնի այն հուզական երանգը, որով ստեղծվել է: Եթե փորձենք այլ ուղղությամբ տանել, կնմանվենք այն շենքին, որի հիմնաքարերը տարբեր որակներ, ամրություն, չափ ունեն: Եվ երբ կկառուցվի շենքը, կնմանվի անհասկանալի ձև ու որակ ունեցող շինության, որն օգտագործման ենթակա չի լինի:
Մեծն Կոմիտասն այսպես է դիմել ուսուցիչներին. «Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է, սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը: Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է, ուրեմն շարժում մըն է, և պարն էլ ինքնին շարժում մը ըլլալով, երգը կզուգորդի պարին հետ: Զգացումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտությամբ երևան կուգան: Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողությամբ ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը»:

Զանազան խաղերի միջոցով պետք է անել այնպես, որ երեխան անդրադարձնի բնության ձայները՝ ծիտիկի ծլվլոցը, շնիկի հաչոցը, կատվի մլավոցը, գորտի կռկռոցը, և այլն: Այդ բնաձայնություններով կարելի է կատարել նաև ուսուցանվող երգը, մանավանդ, եթե սանը դեռ չի կարողանում պարզ խոսել, կարողանում է բնաձայնություններով երգել:

Երեխաները բնության և կենդանիների՝ իրենց իմացած ու սովորած ձայները մեծ հաճույքով ու ճոխությամբ կօգտագործեն իրենց խաղացած հեքիաթ-ներկայացումներում: Դաստիարակն ինքը պետք է իմանա և երեխաների հետ շփման ժամանակ օգտագործի և բնականորեն ուսուցանի մարդկային զանազան բացականչություններ՝ ա՛յ — տե՛ս՝ ինչ ունեմ, ա՛յ – սա է իմ նվերը, ա՛խ – ի՛նչ լավ էր, բա՛ — իհարկե, բա՛ — որ ասո՛ւմ էի, և այլն:

Դրանց ելևէջները և հնչերանգը գոյություն ունեն մեր երգերում, ուստի հարուստ և բազմազան բացականչությունների տիրապետող մարդը հաղթահարում է միօրինակ երգեցողությունը: Չէ՞ որ այդ բացականչությունները արտահայտում են զանգան զգացմունքներ, որոնք հարազատ են մայրենի լեզվին և ոգուն:

... Այն ռիթմիկ մարմնամարզությունը, որն ուղեկցում է օտար երաժշտությամբ, օտար շարժումներով, միայն խաթարում է մանկան հոգին և հոգեբանությունը, մասնատում ամբողջությունը: Ինչո՞ւ պետք է մանուկը խոսի մայրենի լեզվով և անի օտար շարժումներ, մի՞թե շարժումը չունի իր լեզուն, և կամ մի՞թե մեր ժողովրդի երգը, լեզուն, շարժումը և այլ բաները միևնույն ակունքն ու պատճառները չունեն: Դրանցից մեկի փոխարինումը օտարով միշտ քանդում է միասնությունը, խարխլում բնական

տաճարի ոճը, երփեղկում երեխային, մասնատում է նրա մտածողությունը, տատանում հաստատությունը: Ուրեմն օտար տարրը միայն կարող է ավելանալ, գումարվել (չձուլվելով) և ոչ թե փոխարինել:

Ուրեմն **պարը նույնպես մարմնամարզություն է** և ամենակատարյալ ոգեղեն մարմնամարզությունը, զի ֆիզիկական շարժումներին ձուլվում են ոգևորությունը, գերագույն ներշնչանքը, վեհացումն ու վերացումը, ինքնամոռացությունը, ազգային ոգին, որոնք առավելագույն արդյունավետությամբ են կրթում մարմինը, սիրտն ու միտքը, հոգին ու ոգին:
Շարժման ազատությունը նախադուռն է համակարգ ունեցող պարերի ազատ ու անկաշկանդ պարելու: Շարժման ազատությունը գիտակցող, զգացող, դրանով ապրող երեխան երբ սովորում է որևէ համակարգ ունեցող, ձևավորված պար, ապա ազատ ու անկաշկանդ է պարում այդ պարը:

Պարին կարող են նախապատրաստել զանազան խաղեր, ինչպես սանդ ծեծելը, խաղող ճմռելը, ճլորթի խաղալը և այլն:

Մեծ օգուտ կարելի է ստանալ, եթե ստեղծվի հատուկ ձևավորված երաժշտական սենյակ: Սենյակում լինելու են զանազան տիպի նվագարաններ: Սենյակը հարկավոր է հնարավորին չափ այնպես կահավորել, որպեսզի նվագարանները ջարդելու «հնարավորություն» քիչ լինի: Սենյակի գույները ճոխ են լինելու: Նվագարանների մի մասը կարող է ամրացված լինել, մի մասը՝ ոչ, բայց բոլորը մի տեղ չպետք է կիտել, այլ սենյակի բոլոր մասերում շաղ տալ, նույնիսկ կենտրոնում առաստաղից որևէ առանձգական թելով կախված լինեն: Նվագարանները կարող են լինել տարբեր չափերի և տիպերի՝ կարկաչա, չխչխկան, ճռիկ, զանգակներ, զանգ, շվի, և այլն:

ԳԼՈՒԽ 3.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

(Գործնական աշխատանք)

Այս գլխում ներկայացնում ենք կրթահամալիրի նախադպրոցական խմբերում երաժշտական դաստիարակության համակարգը, մեր հավաքած խաղերն ու երգերը, դրանց փորձարկման ընթացքը (ներկայացված են տեսանյութերի հղումներով), ինչպես նաև արդյունքների մեր վերլուծությունները:

3.1. Երաժշտական գործունեության ձևերը նախակրթարանում

Նախադպրոցական հաստատություններում երաժշտական գործունեության ձևերն են.

- երգեցողություն
- ունկնդրում
- պար
- ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժություններ, երաժշտական և այլ խաղեր
- նվագակցություն «բնական», հարվածային և շրխկան նվագարաններով

Երգը ներկայացնելու տարբեր ձևեր կան, այն ընտրում է երաժշտության դաստիարակը՝ ելնելով երգի բնույթից, բովանդակությունից: Կարելի է նախօրոք գտնել բովանդակության հետ կապված հեքիաթ, բանաստեղծություն, պատմություն և այլն, կապել երգի հետ, ստեղծել փոքրիկ թատերական ներկայացում, որտեղ երգն ու բանահյուսությունը միասին կներկայացվեն:Սաները կարող են ստեղծել իրենց պատմությունը, ակտիվ մասնակել այդ գործընթացին:
Ուսուցումից հետո միայն ուսուցանված երգը կրկնել, ամրապնդել ձայնագրության միջոցով: **Խաղերգերը**, բնականաբար, անպայման ազգային մշակույթի լավագույն նմուշներից են, որոնք կարելի է կատարել՝ հենվելով ինչպես տեքստի, այնպես էլ մանկան ընկալունակությամբ ու զգացողությամբ ստեղծածի վրա: Դրանք կատարվում են երգի բովանդակությանն համապատասխան խաղով, գործողություններով՝ օգտագործելով մնջախաղ, պարային շարժումներ, շրխկան և հարվածային ռիթմիկ նվագակցություն: Կարելի է միանգամից խաղալով ուսուցանել և բեմականացնել: Խաղը պետք է բխի խաղերգի բովանդակությունից («Զմփիկ, զմփիկ» , «Խնոցի» , «Տիտոխիկ»): Խաղերգն ուսուցանելիս կարելի է համատեղել խաղը, եթե այն հեշտ է և հնարավորություն է տալիս միանգամից խաղալով կատարել: Այդպիսի խաղերգերից է Էկեք ծեծենք սոխ ու սխտոր պահքի ծիսական երգը, որը շատ հետաքրքիր ու լավ նմուշ է՝ նախակրթարանում սաների հետ խաղալու համար: Այն կարող է ունենալ տարբեր լուծումներ՝ սոխն ու սխտորը ուսումնասիրելով, դրանք հավանգով ծեծելով , մարմնի տարբեր մասերով «ծեծելով» ու համոզվելով, որ իսկապես կատակ խաղերգ ենք կատարում, վերջացրած ծիսական Ակլատիզի հետ խաղարկելով ու նոր կատարելով: Լողանալուց հետո մանկանը պետք է արևը, որ տաքանալով չորանա, և նա կանչում է արևին, որ նա «զիզի քարին վեր» գա, համոզում, որ ամպի տակից դուրս գա, խոստանում է «մի բուռ չամիչ», «թուր ու թվանք» , միայն թե նա «դուս գա»: Այս խաղերգը այնքան բազմազան կարելի է խաղալ՝ ամպի դերը տալով սավանին, վերմակին, թփերին, որոնց տակ կթաքնվի արևը, խաղընկերներին, ծառերին, պահարանին, որոնց հետևը պահ կմտնի: Արևի դուրս գալը ներկայացնել խաղով, պարով՝ օգտագործելով հարվածային, ծլնգան, չխկչխկան, զրնգան նվագարաններ, և այլն:
Պարերգերը նախակրթարանում կարող են կատարվել պարային պարզ շարժումներով, հատկապես փոքրերը, որոնք ազգային պարի զգացողություն դեռ չունեն, պարային շարժումներ դժվարությամբ են կատարում:
Աշխատանքային երգերն ուսուցանելիս, եթե հնարավոր է տվյալ աշխատանքը կատարել, կատարվում է, ցուցադրվում, եթե ոչ՝ փնտրել, գտնել համացանցից

համապատասխան տեսաֆիլմը և ցուցադրել (Երկանք-աղաց-ալրաղաց ալյուր աղալու գործընթաց, կարելի է կապել «Ջաղացս մանի, մանի» երգի հետ): Երգի կատարումը կարելի է ուղեկցել

- տվյալ աշխատանքին համապատասխան կամ ամբողջական կամ մասնակի գործողության ցուցադրությամբ, որն ընթանում է այդ աշխատանքին բնորոշ որոշակի ռիթմով,
- ռիթմիկ նվագակցությամբ (շրխկան, հարվածային, «բնական» նվագարաններ),
- տվյալ աշխատանքին համապատասխան որևէ գործողության ցուցադրությամբ՝ ուղեկցելով ռիթմիկ նվագակցությամբ (շրխկան, հարվածային, «բնական» նվագարաններ)
- պարային պարզ շարժումներով, որի ընթացքում, եթե հնարավոր է, օգտագործել տվյալ աշխատանքին բնորոշ շարժումներ:

Բնության երևույթների, կենդանիների մասին երգերն ուղեկցվում են

- կենդանու շարժումները, տեսքը նմանակելով,
- կենդանու, բնության տարերքի ձայնը նմանակելով (կարելի է կատարել՝ ա. երգի որևէ հատվածում, բ. ցանկացած հատվածում՝ ըստ երեխայի զգացողության),
- տարերքի շարժումը նմանակելով, ցուցադրելով, որը կարող է ուղեկցվել ձայնային նմանակությամբ,
- ռիթմիկ նվագակցությամբ (շրխկան, հարվածային, «բնական» նվագարաններ),
- տարերքի շարժումը նմանակելով, որը կարող է ուղեկցվել ձայնային նմանակությամբ և ռիթմիկ նվագակցությամբ (շրխկան, հարվածային, «բնական» նվագարաններ),
- փոքրիկ ներկայացմամբ, որտեղ կարելի է օգտագործել վերը թվարկվածներից ցանկացածը:
- **Կենցաղային, կատակերգեր, այլ երգեր**
- Սրանք ևս կատարվում են՝ ելնելով երգի բովանդակությունից, բնույթից, ռիթմիկ կառույցից: Կարող են բեմականացվել՝ զուգակցելով պարային կամ այլ շարժումներով, ուղեկցվում են ռիթմիկ նվագակցությամբ (շրխկան, հարվածային, «բնական» նվագարաններով) և այլն:

Երգի նվագակցությունը ռիթմիկ պատկերով ստեղծվում է միասին կամ յուրաքանչյուրը ստեղծում է իր ռիթմիկ նվագակցությունը: Առկա է ինչպես կոլեկտիվ, այնպես էլ՝ անհատական ստեղծագործական աշխատանքը: Կարող են լինել միանման և իրարից տարբերվող, բայց, իսկապես հետաքրքիր ռիթմիկ պատկերներ: Այդ ռիթմիկ պատկերները կատարվում են

- առանձին,
- միասին (կատարում են նույն ռիթմիկ պատկերը),
- միասին, բայց այս դեպքում յուրաքանչյուրը կատարում է իր ստեղծածը, ստացվում է շատ հետաքրքիր ռիթմիկ բազմաձայնություն՝ պոլիռիթմիա:

2. ***Ունկնդրում***

Ունկնդրվող նյութերը ենթադրում են.
— երաժշտական, գեղագիտական ճաշակի ձևավորում,
— ազգային, հոգևոր և համաշխարհային դասական լավագույն ստեղծագործությունների իմացում լսողության միջոցով:
Ունկնդրվող նյութերն ընտրված են ազգային, հոգևոր և դասական երգերից, պարեղանակներից, հայ և այլազգի կոմպոզիտորների լավագույն դասական ստեղծագործություններից:

Ունկնդրումը հարկավոր է կազմակերպել այնպես, որ երեխան կարողանա ոչ միայն լսել, այլև ընկալել ստեղծագործությունը: Այն սկսվում է դեռ նախակրթարանից, որտեղ պետք է հստակ իմանալ՝ ինչ չափով և երբ մատուցել ծրագրով նախատեսված երաժշտությունը:

Մանկապարտեզում ունկնդրման կազմակերպման արդյունավետ ձևերից է քնի ուղեկցումը երաժշտությամբ («Բարի գիշեր, փոքրիկներ»), ուղեկցումը երաժշտա-ռիթմիկ խաղերով, շրխկան և բնական նվագարաններով ուղեկցումը(«Ուրախ շրխկաններ») գործիքային կատարումը, որն ուղեկցվում է նվագարանի հետ ծանոթությամբ («Մենք ենք ու մեր շվին»), որևէ գործունեության ընթացքում (նկարելիս, ծեփելիս, խաղալիս և այլն) երաժշտության ուղեկցումը («Է. Գրիգ, Առավոտ»), առավոտյան մարմնամարզության համար հնչող երաժշտությունը (ստեղծել ենք ա.դասական, բ.ազգային ստեղծագործություններից, գ. ծրագրային երգերից կազմված հավաքածուներ)՝ («Նախավարժանք»): Ունկնդրվող երաժշտության ուղեկցությամբ պատրաստված տեսահոլովակները երկուսից երեք տարեկաններից ոչ բոլորն են դիտում, եթե մուլտֆիլմի տեսքով է («Կոմիտաս, Հինգ էծ ունեմ ուլերով» , «Արև, արև, եկ, եկ» , Վ. Ա. Մոցարտ, «Գիշերային փոքրիկ սերենադ») դիտողները փոքր-ինչ շատ են: Չորսից հինգ տարեկաններն ավելի ակտիվ են մասնակցում այդ գործընթացին:

P, f, crescendo, diminuendo (decrescendo)
Երաժշտության դաստիարակը երեխաներին առաջարկում է ծափահարել: Ձեռքերի շարժումով ցույց է տալիս՝ ծափահարել մեղմ: Հետզհետե, ձեռքերը բարձրացնելով վեր և ափերը բացելով, ցույց է տալիս, որ ծափերը ուժեղացնեն: Այսպես, փոխելով ձեռքերի դիրքը և դեմքի արտահայտությունը, նա մեկ՝ ուժեղացնում, մեկ՝ մեղմացնում է ծափերը: Այսպես, երեխաները կատարում են՝ ուժեղ՝ f, մեղմ՝ p, crescendo, diminuendo, միևնույն ժամանակ ծանոթանում խմբավարի շարժումներին: Նույնը կատարում են ոտքերի դոփյունով:

Ռիթմիկ և երաժշտա—ռիթմիկ վարժություններ, երաժշտական և այլ խաղեր

Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժությունների նպատակը սովորողների երաժշտական ունակությունների, ռիթմի զգացողության զարգացումն է, հնչյունի տևողության ճիշտ կատարումը:

Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժությունները կատարվում են

- ունկնդրվող նյութի ուղեկցությամբ,
- առանց երաժշտության ուղեկցության,
- ծրագրային բանաստեղծության ուղեկցությամբ,
- ծրագրային երգերի ուղեկցությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի, տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության, գործնական աշխատանքի արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստում են կենսաբանական, սոցիալական և մանկավարժական գործոններ: Վերջիններիս շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձ-նավորության ձևավորման կարևորագույն գործոն է:

- Երեխայի գեղարվեստական գործունեության մեջ էական տեղ ունի երաժշտական դաստիարակությունը, իսկ երաժշտական մշակույթի

ձևավորման գործում կարևոր տեղ են գրավում երգերը, խաղերգերը, երաժշտական խաղերը, պարերգերը:

- Նախակրթարանում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, հաղորդակից դարձնել և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային նվագարաններին
- Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով, ուստի այստեղ **երաժշտական նյութը** պետք է լինի անենալավն ու փորձվածը: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև խաղիկը, ասիկը:

Մեր փորձարկման արդյունքում համոզվեցինք, որ երաժշտական գործունեությունը նպաստում է երեխաների

- տարբեր կարողությունների դրսևորմանը, հղկմանը, մի շարք նոր հմտությունների ձեռքբերմանը (լեզվական, թատերական),
- խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը, գեղարվեստական ճաշակի զարգացմանը,
- ինքնադրսևորմանը, բարդույթներից ձերբազատմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,
- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

1. **Թեմային առնչվող մանկավարժական գրականություն.** այս աշխատանքը ներկայացված է դիպլոմային նախագծի առաջին գլխում.
2. **5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց**
   Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
   Նախադպրոցական մանկավարժություն
   С. А. Козлова, «Дошкольная педагогика»
   Նախադպրոցական մանկավարժություն. Նաիրա Գրիգորյան
3. **Երաժշտական գրականություն, հոդվածներ**
1. **Ա. Շահնազարյան, Երաժշտությունը նախակրթարանում**
2. **Սոֆյա Գրիգորյան՝ Խաղը, շարժումը, հարվածային, շրխկան նվագարանները ն ախակրթարանում**

3. Մարինե Մկրտչյան՝ «Երաժշտության ունկնդրումը նախակրթարանում և կրտսեր դպրոցում»
4. Նախակրթարանում երաժշտության ծրագրի մեթոդական մշակում